ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2013 թվական N 145 -Ա

ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով , <Բաժնետիրական ընկերությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <թ> կետով՝

ո ր ո շ ու մ եմ.

1. 2013 թվականի նոյեմբերի 27-ից լուծել <Բերդի բժշկական կենտրոն> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արամ Հարությունյանի հետ 05.03.2009թ. կնքած աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը, Արամ Հարությունյանին 2013 թվականի նոյեմբերի 27-ից նշանակել < Բերդի բժշկական կենտրոն> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և կնքել աշխատանքային պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ.նոյեմբերի 25
ք.Իջևան